ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ. Խորհրդավոր ընթրիք. Հայկական ավանդույթից մինչև Լեոնարդո, *Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2008, 112 էջ:*

Կան թեմաներ, որոնք ոգեշնչում են արվեստագետներին հազարամյակներ: Դրանցից մեկն է «Խորհրդավոր ընթրիքը», որի պատկերները դարավոր պատմություն ունեն քրիստոնյա ժողովուրդների մանրանկարներում, որմնանկարներում, մեծակտավ գլուխգործոցներում: Խորհրդավոր ընթրիքի մասին գրում են չորս ավետարանիչները՝ Մատթեոսը, Մարկոսը, Ղուկասը և Հովհաննեսը: Այդ ընթրիքի մասին վկայում է նաև Պողոս առաքյալը, որը կորնթացիներին ուղղված թղթում գրում է. «Չեմ գովում, որովհետև ես ընդունեցի Տիրոջից, ինչ որ ավանդեցի ձեզ. այն է, որ Տեր Հիսուս այն գիշերը, երբ մատնվեց, հաց վերցրեց, գոհություն մատուցեց, կտրեց և ասաց. «Այս է իմ մարմինը, որ ձեզ համար է. արե՛ք այս իմ հիշատակի համար»: Նույն ձևով և ընթրիքից հետո վերցրեց և ասաց. «Այս բաժակը Նոր ուխտն է իմ արյունով. արեք այս իմ հիշատակի համար, ինչքան անգամ որ խմեք» (Ա Կորնթ., ԺԱ, 23-26):

Վ. Դևրիկյանն իր «Խորհրդավոր ընթրիք. Հայկական ավանդույթից մինչև Լեոնարդո» գրքում կատարել է մեկնողական շնորհակալ գործ: Նա բացատրում է այն գլխավոր խորհրդանիշերը, որոնցով իր արտացոլումն է գտել Խորհրդավոր ընթրիքը հայկական միջնադարյան մանրանկարներում, որմնանկարներում, ինչպես նաև իտալական Վերածննդի նկարիչների գործերում: Այս բացատրությունները երևան են բերում խորհրդավոր ընթրիքի պատկերման ընդհանրությունները և որոշ շեղումները՝ յուրաքանչյուրն իր մեկնությամբ:

Ընթերցողը գրքի միջոցով ոչ միայն տեսնում է խորհրդավոր ուխտի նկար-պատկերը, այլև կարդում է այն, ինչպես գիրքն են կարդում հասկանալու համար: Գրքի հեղինակը խորհրդավոր ընթրիքի բացատրությանը կցել է քրիստոնեական կրոնի ծիսական, խորհրդանշային, աստվածաբանական բազմաթիվ հասկացությունների մատչելի ու հստակ մեկնություններ, առանց որոնց անկատար կլիներ երևույթի ընկալումը: Նա բացատրում է Հին և Նոր Ուխտերը, Զատիկը, Ոտնլվան՝ այդ հասկացությունների մեկնություններն ըստ հայ միջնադարյան աստվածաբանների ներկայացնելով:

Գիրքն ունի իմաստային ճշգրիտ բաժանման ենթարկված ենթագլուխներ: Թվարկենք դրանք՝ 1. «Փրկչի երկրային կյանքի վերջին ընթրիքը», 2. «Ընդհանուր պատկերագրությունը», 3. «Պատկերագրական կանոնի ձևավորումը», 4. «Խորհրդավոր ընթրիքը Փոքր Հայքում գրված երեք ձեռագրերում», 5. «Մուղնու Ավետարանը և պատկերագրական կանոնի ամբողջացումը», 6. «Ոտնլվա՞, թե՞ խորհրդավոր ընթրիք», 7. «Տագնապի, բայց և հույսի ու սպասման ընթրիքը», 8. «Հալլեի Ավետարանի մանրանկարը», 9. «Աստվածային անհուն սիրո և խոնարհության արտահայտությունը. Ոտնլվա», 10. «Խորհրդավոր ընթրիքի սեղանի թացյալ պատառը», 11. «Քրիստոս պատարագէ ի Վերնատանն» հաղորդության խորհրդի հաստատումը», 12. «Մարդկային դրամայի արտահայտման ստեղծագործական որոնումների ճանապարհին. դասական միջնադարից դեպ Վերածնություն», 13. «Խորհրդավոր ընթրիքի գեղարվեստական հանրագումարը և բարձրակետը», 14. «Տիրոջ սիրելի աշակերտը, հավատո վեմը և մատնիչը չարչարանաց ճանապարհին», 15. «Քրիստոս և առաքյալները»:

Խորագրերի այս կառույցը նպաստում է գրքի իմաստային ընկալման հստակությանը: Սրանք այն գիտելիքների պաշարն են կազմում, որը պետք է ունենա ամեն կրթված հայ քրիստոնյա, եթե մանավանդ իրեն համարում է մտավորական: «Ընդհանուր պատկերագրությունը» բաժնում, բացատրվում է, թե ինչու ձուկը եղել է առաջին

քրիստոնյաների խորհրդանիշը: Ձուկը հունարեն «իխտիս» բառն է, որի տառերը նշանակում են՝

Հիսուս

Քրիստոս

Աստծո

Որդի

Փրկիչ[1]*:*

Վ. Դևրիկյանը ներկայացնում է, թե միջնադարյան հայ եկեղեցու Ավետարաններում ինչ դիրքով է նստած Հիսուսը Խորհրդավոր ընթրիքի սեղանի մոտ, ովքեր են առաքյալներից առավել մոտ նստածները, ինչ էր դրված սեղանին ընթրիքի ժամանակ: Նա Խորհրդավոր ընթրիքի պատկերները բաժանում է երկու խմբի՝ պատմողական և ծիսական. «Պատմողականներում շեշտվում է հատկապես ապագա մատնությունը, որով ինչ-որ տեղ գործողությունների կենտրոնում է հայտնվում ձեռքը սեղանին պարզած Հուդան» (էջ 13):

Հայկական Ավետարանների կողքին դիտարկվում են նաև Անտիոքի, Կապադովկիայի և այլ վայրերի Ավետարաններում եղած Խորհրդավոր ընթրիքի, Ոտնլվայի և սրանց հետ կապված Ավետարանական այլ պատկերներ: XI դարից հասած ձեռագրերի մեջ Խորհրդավոր ընթրիքի բարձրակետը Դևրիկյանը համարում է Մուղնու Ավետարանը, որը Խորհրդավոր ընթրիքի պատկերագրման կանոնը ամբողջացնում է. Խորհրդավոր ընթրիքին հաջորդում է Հուդայի մատնությունը, հետո էլ Պետրոսի ուրացումը: Այս վերջին դրվագը ներկայացնող մանրանկարներում հայտնվում է աքաղաղի պատկերը. «Թորոս Տարոնացու՝ 1318 թ. Գլաձորում նկարազարդված Ավետարանի՝ Պետրոսի ուրացման մանրանկարում ևս ողջ տեսարանի վրա իշխում է իր կանչելով ուրացումը խորհրդանշող կարմիր աքաղաղը, որը խորհրդանշելով Պետրոսի ուրացումը, որպես լուսանցային մանրանկար, ձեռագրերում հաճախ պատկերվում Ավետարանի համապատասխան հատվածի դիմացի լուսանցքում» (էջ 26):

Գրքի հեղինակը հայ միջնադարյան նաև համընդհանուր քրիստոնեական պատկերագրության մեջ իր յուրօրինակ տեղն է հատկացնում Հալլեի համալսարանի գրադարանում պահվող հայերեն Ավետարանի Խորհրդավոր ընթրիք նկարին: Այն բավականին շեղումներ ունի հայկական այլ մանրանկարների կանոնական պատկերագրությունից: Գրքում դիտարկված է նաև Ոտնլվայի ժամանակ առաքյալների կերպարների տարբերակված պահվածքը: Մանրանկարիչները փորձել են պատկերագրության հնարավոր միջոցներով առավել տպավորվող ու Ավետարանի ոգուն հարազատ ներկայացնել մարդկային հեզության ու խոնարհության այդ բացառիկ դրվագը: Հատկապես խորիմաստ է 1374-ին Սեպուհ լեռան ծաղկող Խաչատուր Կեսարացու պատկերագրած Ավետարանը, որը հայտնի է «Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու Ավետարան» անունով:

Խորհրդավոր ընթրիքի հետ է կապվում նաև «թացյալ պատառ» հասկացությունը: 1303-ին ստեղծված մանրանկարներում «թացյալ պատառի» վերաբերյալ կա համապատասխան մակագրություն: Հիսուս Քրիստոսի գլխավերևում գրված է՝ «Տէր Յիսուս», իսկ Հիսուսի ու Հուդայի միջև կարդում ենք. «Թացեալ պատառն տա Յուդայի»: Հուդայի գլխավերևում նրա անունն է՝ «Յուդա», մյուս աշակերտների գլխավերևում գրված է առավել խորհրդանշական բացատրություն՝ «Յիսուս աշակերտաւքն ի Վերնատունն ի սեղանն խորհրդո»: Նկարի մակագրությունը շեշտում է, որ հենց այս ընթրիքով հաստատվեց Հաղորդության

[1] *Ըստ Նոր Կտակարանի առասպելաբանական մեկնաբանման՝ զուգահեռ է անցկացվում ձկան և Հիսուս Քրիստոսի միջև: Այս զուգահեռման հիմքը հունարեն ձուկ բառի հինգ տառերն են, որ նշանակում են Հիսուս Քրիստոս Աստծու Որդի Փրկիչ, դրա համար էլ Քրիստոսի հետևորդներին քրիստոնեության առաջին դարերում կոչում էին ՁԿՆԵՐ: Բնութագրականը այստեղ այն է, որ Քրիստոսի որոշ աշակերտներ ձկնորսներ էին: Նրանց է ուղղված Հիսուսի խոսքը. «Ես ձեզ կդարձնեմ մարդկանց որսացողներ»: Անկարևոր չէ նաև, որ ձկան պայմանական ուրվագիծը, որպես կանոն իր մեջ պատկերում է Քրիստոսին, Սուրբ Կույսին:*

Ձուկը վաղ քրիստոնեական շրջանում ընդունված էր որպես Քրիստոսի ձգողական խորհրդանիշ: Ավելի ուշ շրջանի քրիստոնեական պատկերներում Ձուկ-Հիսուսին միանում են առավել հասկանալի խաչը՝ հաղթապսակով, այլ կենսատու արևային խորհրդանիշով և խաղողով (տե՛ս Энциклопедия символов, М.–Санкт-Петербург, 2005, с. 480-481*):*

խորհուրդը, որի ծեսը սրբորեն կատարում են քրիստոնեական բոլոր եկեղեցիները:

Դեռևս միջնադարում հայ եկեղեցու շատ գործիչներ փորձել են պարզել, թե ինչու Հիսուսը այդքան մեղմ էր վարվում Հուդայի հետ՝ իմանալով, որ նա իր մահվան պատճառն է դառնալու: Բերելով տարբեր կարծիքներ՝ գրքի հեղինակն առանձնացնում է կիլիկյան մեկնիչ Բարսեղ Մաշկևորցունը, որը նշում է, թե հաց կիսելով իրար հետ մարդիկ իրենց միջից հանում են թշնամությունը, գազաններն անգամ ընտանի են դառնում, երբ նրանց կերակրում են:

Երևանի մաշտոցյան Մատենադարանի -316 ձեռագրի (Ավետարան, ԺԳ-ԺԴ դդ., Արցախ) մանրանկարում Հիսուս Քրիստոսը և տասնմեկ առաքյալները բոլորած են սեղանի շուրջը, նրանց վերևում գրված է՝ «Վերնատուն», իսկ Հուդան դուրս է դրված Վերնատան շրջագծից, և նրա գլխավերևում գրված է՝ «Յուդա առեալ զպատառն և ել» (էջ 65):

Վ. Դևրիկյանն ուշադրություն է հրավիրում ծիսական Խորհրդավոր ընթրիքի ներքին պատկերագրման դասակարգմանը՝ դրանք բաժանելով 4 տարբեր խմբերի միջև: Դրանց մեջ առավել տարածվածը, իհարկե, այն տարբերակն է, որում Քրիստոսը ձեռքին սկիհն է պահել, իսկ մյուս ձեռքով Սուրբ Հաղորդություն է տալիս առաքյալներին:

Գրքում խոսք կա նաև Հռոմ քաղաքի մոտ գտնվող վաղ քրիստոնեական կատակոմբների մասին: Մենք տեսել ենք այդ կատակոմբներից մեկը, որը գտնվում է Հին Ապպիական ճանապարհի մոտ (կատակոմբա բառն առաջացել է հունական kata cymba *բառերից, որ նշանակում է - փոսի մոտ): Դրանք ստորգետնյա նեղ միջանցքներ են, որ օգտագործվել են առաջին քրիստոնյաների թաղման համար: Հռոմում քրիստոնեությունը գաղտնի ձևով տարածման ժամանակ այդ ստորերկրյա քրիստոնեական գերեզմանները սկսեցին արագորեն աճել՝ գետնի տակ կիլոմետրերով գետնուղիներ փորելու հետևանքով: Այդ ստորգետնյա գերեզմանոցները երբեմն մի քանի հարկանի էին և սարդոստայնի նման խճճված: Դրանցում շատ հեշտ կարելի է մոլորվել ու կորչել: Ահա թե ինչու կատակոմբներ այցելում են փոքր խմբերով և հատուկ ուղեկցի հսկողությամբ: Կատակոմբներում կան փոքրիկ եկեղեցիներ, պատերի վրա հաճախ նկարված է Ջուկը՝ Հիսուս Քրիստոսի խորհրդանիշը: Սուրբ Սեսիլիայի գերեզմանի տեղում նրա պառկած պատկեր մահարձանն է: Նրա անվան հետ կապված է հետևյալ ավանդությունը: Սեսիլյան հռոմեական ազնվականի աղջիկ էր, և նա է միջնորդում, որ իրենց հողատարածքի ընդերքում թաղվեն քրիստոնյաները: Նա գաղտնի պաշտում էր Հիսուսին, ու երբ մեռնում է, նրան էլ թաղում են այդ կատակոմբում: Հռոմում քրիստոնեությունը պաշտոնապես ընդունելուց հետո, երբ հռոմեական եկեղեցին նրան սուրբ հռչակեց, բացվեց սրբուհու գերեզմանը և, ի զարմանս բոլորի, նրա մարմինը չէր փտել:*

Ապպիական ճանապարհի սկզբում կա մի փոքրիկ եկեղեցի, որը կառուցվել է այն տեղում, ուր Հիսուսը երևաց Հռոմից փախչող Պետրոսին ու հարցրեց՝ յո՞երթաս: Այդ եկեղեցում դրված է լեհ նշանավոր գրող Հենրիկ Սենկևիչի կիսանդրին՝ ի պատիվ նրա «Յո՞երթաս» վեպի:

Վ. Դևրիկյանը համառոտ ներկայացնում է Վերածննդի նկարիչների պատկերած Խորհրդավոր ընթրիքի նկարներում շեշտված մարդկային անհատականացումը: Դրանք դիտարկվում են Ջոտտոյի երկու որմնանկարներում՝ «Խորհրդավոր ընթրիք» և «Ոտնլվա»: Ապա ներկայացվում են նրան հաջորդող նկարիչների որմնանկարները՝ Դուչչիո, Դոմենիկո Գիրլանդայո, Կոզիմո Ռոսսելի և ապա այդ թեմայի բարձրակետը՝ Լեոնարդո դա Վինչիի Խորհրդավոր ընթրիքը, որը գտնվում է Սանտա Մարիա դե լա Գրացիե վանքի միաբանական սեղանատան պատի վրա (1495-97 թթ.). «Այս նկարը, սակայն, եզակիորեն հանճարեղ է նաև իր կոմպոզիցիոն ընդհանուր կառուցվածքով, ուր Ավետարանի վրա խարսխված միջնադարյան պատկերագրական ավանդույթը ներկայացվում է Վերածնության արվեստին և նոր շրջանի մտածողությանը բնորոշ ձևով» (էջ 86): Լեոնարդոյի այս նկարը այսօր թե՛ մասնագետներին և թե՛ ողջ աշխարհի արվեստասերներին տանում է Միլան՝ այն դիտելու և հիանալու: Լեոնարդոն այս նկարի վրա աշխատել է մոտ 16 տարի: Ըստ արվեստագետների՝ նա նկարը չի էլ ավարտել, հատկապես չեն ամբողջացվել Հիսուսի և

Հուդայի կերպարները՝ այսինքն Խորհրդավոր ընթրիքի երկու կիզակետ կերպարների պատկերումը: Այդ մասին վկայություն ունի նաև Գյոթեն (էջ 89): Ի դեպ, Լեոնարդոյի շատ նկարներ անավարտ են. այդպիսի մի հոյակապ կտավ առանձին ցուցադրված է Լոնդոնի ազգային պատկերասրահում: Դևրիկյանը հիշեցնում է, որ Լեոնարդոյի «Խորհրդավոր ընթիքը» կերտված է նրա նախասիրած համաչափության սկզբունքով: Գրքում տրվում են նկարի առանձին դրվագների բնութագրականները: Վերածննդի ռեալիստական պատկերներով կերտված Խորհրդավոր ընթրիքը իր շարունակությունն ունի նաև հետագա շրջանի նկարիչների մոտ: Եվ երևույթը հասնում է մինչև մեր օրերը, մինչև այսօրվա հայ նկարիչները:

Վ. Դևրիկյանը գրում է, որ Լեոնարդոն շատ է չարչարվել Հուդայի դեմքի վրա և մի անգամ փողոցում հանդիպել է դաժան ու նողկալի դեմքով մի հարբեցողի ու նրան բերել վանքի սեղանատուն: Ըստ նրա սկսում է նկարել Հուդային, երբ հարբեցողն ուշքի է գալիս, Լեոնարդոյին արտասվելով պատմում է, որ պատանի եղած ժամանակ ըստ իր պատկերի նկարել է Հիսուսի դեմքը:

Իհարկե, այստեղ արժե հիշատակել Վաշինգտոնի Ազգային պատկերասրահում գտնվող Սալվադոր Դալիի «Խորհրդավոր ընթրիք» լայնածավալ կտավը, որը ցուցադրված է առանձնացված: Գերիրապաշտ նկարչի գլուխգործոցներից մեկն է այն: Խորհրդավոր ընթրիքի սեղանը ծովի ափին է: Հիսուսը մինչև գոտկատեղը ջրի մեջ է: Սեղանին՝ սփռոցի վրա, դրված է գինու բաժակը և երկու մասի բաժանված հացի նկանակը: Սփռոցի վրայի ծալքերը խաչաձև են: Նկարի վերևում վերստին Հիսուսի մերկ մարմինն է՝ միայն կրծքի մասը՝ լայն բացված թևերով. գլուխը չի երևում: Նկարում պատկերված ծովը շրջապատված է լեռներով, որոնց հետևից բարձրանում է արևը՝ մի հանգստացնող լույս սփռելով: Հիսուսի՝ «Մեկը ձեզանից մատնելու է ինձ» խոսքերից առաքյալները սարսափահար են, նրանց դեմքերը, ի տարբերություն միջնադարի և Վերածննդի նկարների կտավների, գրեթե չեն երևում: Ամենակարևորը, չեն երևում նրանց աչքերը: Հիսուսի հայացքը պայծառ է՝ իր գործի արդարությունն ու կարևորությունը գիտակցող գերմարդու աստվածային արտահայտությամբ:

«Խորհրդավոր ընթրիք» գրքի հեղինակը բարեխղճորեն նշում է այն հետազոտողների անունները, որոնց աշխատություններից ինքն օգտվել է: Դրանք և՛ մեր ժամանակակիցներն են, և՛ անցյալի հետազոտողներ են՝ հայ, ռուս, այլազգի: Շատ ենք կարևորում, որ գրքում Վ. Դևրիկյանը ջանացել է միջնադարյան բնագրերը ներկայացնել արդի հայերենով. այս փաստը կնպաստի գրքի ընթերցողների քանակի ավելացմանը, որովհետև մասնագետները քաջատեղյակ են նյութին: Գիրքը գրված է մեծ սիրով, հմտությամբ և մի ազնիվ մղումով. քրիստոնեական կրոնի պատգամները պատվաստել ամեն ընթերցողի մեջ, մերժել այսօր էլ մեր կյանքում եղած հոռի դրսևորումները:

Վ. Դևրիկյանն իր գիրքն ավարտում է հետևյալ հավատով. «Արդեն ավելի քան հինգ հարյուր տարի միաբանական այս սեղանատան պատի որմնանկարից նույն հանգիստ հայացքով մեզ է նայում Ուսուցիչը՝ հիշեցնելով, որ միայն մտահոգությունն ու ցավակցությունը քիչ են, որ կյանքի վճռական պահերին պետք է ունենալ Հովհաննեսի նվիրվածությունը, Պետրոսի հաստատակամությունը և ի բաց վանել մատնիչի դավաճանությունը՝ ընթանալով մեզանից յուրաքանչյուրի համար նախասահմանված առաքելության ճանապարհով» (էջ 111):

Գովեստի արժանի է նաև «Տիգրան Մեծ» հրատարակչությունը՝ գրքի տպագրական որակի և նկարների ցանկալի արտատպության համար:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ